Եւ, ճիշտ որ, Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դէպի քայքայում։ Օր օրի վրա սաստկանում էին հակամարտութիւնները կովկասեան ժողովուրդների միջև, որոնցից վրացիները դաղտնի, բայց տենդագին որոնում էին գերմանացիների հովանաւորութիւնը, ադրբէջանցիները բռնել էին Թիւրքերի փեշից և քաշում էին դէպի Բաղու, որը այդ օրերին բոլշեւիկների ձեռքն էր։ Հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիւ էին մղում մահ ու աւեր սփռելով առաջ շարժւող Թիւրքական զօրքերի դէմ։

Հայ ներկայացուցիչները Բաթումում փորձեցին համաձայնութեան գալ ադրբէջանցիների հետ, բայց հանդիպեցին խիստ անդիջող վերաբերումի։ ադրբէջանցիները պահանջում էին ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շարուր-Նախիջևանը, այլ և Երեւանի ու Էջմիածնի գաւառների մեծ մասը՝ Երեւան քաղաքով հանդերձ։ «Հայաստանի մայրաքաղաք կարող է լինել Էջմիածինը», ասում էր շնականօրէն Ուսուպբէգովը Խան-Խոյսկու և Ռասուլ Զադէի հաւանութեամբ։ Եւ սրանք համարւում էին դեռ չափաւորները։ Անդին գործում էր դր. Սուլթանովը Գանձակի ու Բաղուի Ազգ. Խորհուրդների խան ու բէգ անդամների հետ, որոնցից 30 հոգինոց մի պատւիրակութիւն եկել էր Բաթում և համոզում էր Թիւրքերին օր առաջ շարժւել դէպի Անդրկովկասի խորքերը՝ ազատելու համար Բաղուի մահմետականներին բոլշեւիկների և հայերի ձեռքից։ Ադրբէջանցի Թուրքերը անդրկ. պատւիրակութեան մէջ անվերապահ կերպով պաշտպանում էին Թիւրքերին և իրենց քայլերը յարմարեցնում վերջիններիս ծրագիրներին։

Ըստ էութեան, աւելի լաւ չէր և վրաց ներկայացուցիչների դիրքը։ Ինչպէս պարզւեց յետոյ, Չխենկելին և իր ընկերները՝ պատւիրակութեան միւս անդամներից թագուն, բանակցութիւններ էին վարում Գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանաւորութեան տակ դնելու նպատակով։

Ցաճախ Բաթումում երեւում էին վրացի գործիչներ, որոնք նոյնպէս դաղտագողի խորհրդակցութիւններ էին անում, տեսնւում էին մերթ Թիւրքերի, մերթ դերմանացիների հետ և հայերի թիկունքում ինչ որ մութ հաշիներ էին կարդադրում։ Ցետագայում յայտնի դարձաւ, որ նրանք Վրաստանի անկախութեան յայտարարութիւնն էին նախապատրաստում։ Վրաց պատւիրակութեան անդամներից մէկը՝ պրոֆ. Զ. Աւալովը հետեւեալ ձեւով է ներկայացնում այդ դաւերը.

«Գերմանական պատւիրակութեան հետ ունեցած բաց ու անկեղծ զրոյցների ընթացքում պատրաստւեց Վրաստանի նշւող դիրքը՝ անդրկովկասեան միութեան անբաժանելի քայքայման նախատեսութեան հետեւանքով։ Միայն մի քանի մարդ տեղեակ էր դաղտնիքին։ Թիֆլիսից եկած Ն. Ժորդանիան Վրաց Ազգ. Խորհրդի նախագահի և Սէյմի ու Վրաստանի Սոց.-Դեմոկրատական կուսակցութեան պարադլուխի իր դիրքով հանդիսացաւ այն անձը, որին վիճակւեց Թիֆլիսում հիմնական ակտերը (Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը և Անդրկ. Սէյմի ինքնավերացումը) անցկացնելու դժւարին գործը։ Նա, ըստ երեւոյթին, տատանւում էր՝ միանդամայն հասկանալի և օրինական պատճառներով. Վրաստանի անկախութիւնը քիչ էր կապւում իր նախկին գործունէութեան ու հաւատամքի և